ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-28-Ո-78
2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասով, 89-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և 94-րդ հոդվածի 1-ին մասով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Դատական դեպարտամենտի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով «Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում» 1080 ծրագրի «Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդի ձևավորում և կառավարում» 11018 միջոցառումից նույն ծրագրի «Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովում և Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատական իշխանության անկախության երաշխավորմանն ուղղված միջոցառումների իրականացում» 11001 միջոցառմանը հատկացնել **12 047 020 (տասներկու միլիոն քառասունյոթ հազար քսան) ՀՀ դրամ,** այդ թվում՝

1) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» 511200 հոդվածով՝ Դատական դեպարտամենտի և «Մավշին» ՍՊԸ-ի միջև 26.04.2019թ. կնքված թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/03» ծածկագրով պետական գնման պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար վճարում կատարելու նպատակով՝ **8 976 000 (ութ միլիոն ինը հարյուր յոթանասունվեց հազար)** ՀՀ դրամ,

2) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» 425100 հոդվածով՝ Դատական դեպարտամենտի և «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 05.04.2019թ. կնքված թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/02» ծածկագրով պետական գնման պայմանագրով նախատեսված

աշխատանքների կատարման համար վճարում կատարելու նպատակով՝ **1 720 000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսան հազար)** ՀՀ դրամ,

3) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման **«Հատուկ նպատակային այլ նյութեր»** 426900 հոդվածով՝ Դատական դեպարտամենտի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի միջև 26.04.2019թ. կնքված թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/06» ծածկագրով պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման համար վճարում կատարելու նպատակով՝ **1 351 020 (մեկ միլիոն երեք հարյուր հիսունմեկ հազար քսան)** ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2019թ. մայիսի 6
ք. Երևան